

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՕԾՈՒՄԸ ՎՆՀԱՓԱՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԿՐՈՒՅԻ I-ի տեղի ունեցաւ ս. Էջմիածնում 26-ն սեպտեմբերի, վանքի դաւթում, զանգակատան առջև առանձին պատրաստած բեմի վրայ, ներկայութեամբ 8—10 հազար հոգու:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ, սեպտեմբերի 15-ին ստացանք հեռագիր Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանից, որ առանձին տպած նոյնը ցրեցինք Թիֆլիսի և մասամբ գաւառական մեր բաժանորդներին: Հեռագիրը այս էր.

«Սմբագրութեան «Մուրճ» ամսագրի, Էջմիածին 14-ն սեպտեմբերի, Բարեհաճութեամբ ՎՆՀԱՓԱՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ներկայ սեպտեմբեր ամսի 26-ին նշանակած է ս. Օծումն Նորին ՎՆՀԱՓԱՈՒԹեան Տ. Տ. ՄԿՐՈՒՅԻ I ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ամենայն Հայոց, Խնդրում ենք չպտարարէք ձեր ամսագրում ի գիտութիւն բոլոր բարեպաշտ և ջերմեռանդ հայերի: Անդամ սինոդի Արիստակէս եպիսկոպոս:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ վրայ աւելացան պ. Վրուրի պատրաստածները, ուր Խրիմեանը դուրս է բերւած երեք տեսակ դիրքերում: Համեմատապէս ամենալաջողւածն ենք գտնում ալն մէկը, որ կիսապրոֆիլով է դուրս բերւած, թէև նրբութեան ու արտապատութեան կողմից նա չի կարող մրցել Նրուսաղէմում հանած ալն մի պատկերի հետ, որի մասին անցեալ ամիս քիշատակեցինք, և որից Թիֆլիսում չի ծախւում, և որպէս իմացանք, լուսանկարչի ազգանունն է Գրիգորեան: Բայց Վրուրի կիսապրոֆիլով հանած լուսանկարը աւելի մեծ նմանութիւն ունի Խրիմեանի հետ, քան բոլոր ալն պատկերները, որոնք տարածւում են մեզանում, դոցա թւում նաև «Աղբիւր-Տարազինը»: Խրիմեանին, ինչպէս երևում է, աւելի չաջողւում է նկարել պրոֆիլով. en-face պատկերներից ամենալաջողւածը մենք տեսանք Էջմիածնում, դա՛ Նրեանում աշխատող լուսանկարիչ պ. Փնշտմալճեանի գործն է:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆՑԻՆ վեհափառ Կաթողիկոսը նշանակել է Էջմիածնի ձեռնարանի առաջ դաստիարակ և Ուսումնական լանձնատնոցովի անդամ:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ նշանակած է, Մեսրոպ քահանայ Մե-
լեանցի տեղ չուն թեմի առաջնորդական փոխանորդը, մինչև
ցնոր անօրէնութիւն:

ՊԱՏԳԱՄԱՆՈՐՆԵՐԻ ԳՐՈՒՊՊԱ, Բժիշկ ուսանող պ. Արտաշէս Շիսեանցը
ձեռնարկել է լուսանկարների մի գրուպայա կազմել ան ընդոր
պատգամաւորներից, որոնք ներկայացել են Նորին Վեհափա-
ռութիւն Հայրիկին, սկսած Երուսաղէմից մինչ Էջմիածին, ան
է մինչ ս. Օծումը:

ԿԱՐԾԻՔՆԵՐ «ՄՈՒՐՃ»-Ի ՄԱՍԻՆ, Բաքում հրատարակող միակ ամենօ-
րեալ թերթը՝ ուսաց «Կասպի» (Каспий) լրագիրը իւր 170-
րդ համարում «Արաւեան» ստորագրութեամբ մի լօգած է զկ-
տեղել «Հակական նամակներ» խորագրով, ուր լօգածագիրը,
խօսելով «Մուրճ» ի մասին, մեր ամսագրի հետեւալ գրական
արժանաւորութիւններն է շնորհում. 1) «Համակրութիւններ
դէպի ամեն ինչ որ լուսաւոր է և լաւ, 2) ձգտումն ծառայել
ժողովրդի շահերին, և 3) խումբ աշխատակիցների, որոնք շի-
տակութեամբ են վերաբերում դէպի գրականութիւնը» (Сим-
патин ко всему свѣтлому и хорошему, стремление служить
интересамъ народа и составъ сотрудниковъ... честно отзы-
вляясь къ литературѣ).

Իսկ «Մուրճ»-ի ամենառաջին ատկութիւնը լօգածագիրը
գտնում է մեր ամսագրի ոգու մաքրութեան մէջ (чис-
тотелѣность), և, ինչպէս երևում է, Արաւեանը հիացած է
ան բանից, որ «Մուրճ»-ը, բանակուելիս՝ գաղափարի սահ-
մանից դուրս է ի գալիս (полемизируется на идейной
почвѣ).

Ցանկանում ենք մեր կողմից որ Արաւեան և նորա ըն-
կերները ալ ոգին իրանց սեփականը դարձնեն, որով նորա
աւելի համակրելի կը դառնան մեր աչքում:

«ՄՇԱԿ», ԼՐԱԳՐԻ ՆՈՐ ԽՄԲԱԳԻՐԸ, «Մշակ»-ի հիմնադիր և խմբագիր պ.
Գրիգոր Արծրունու մահից չետոյ, որպէս լատին է, ալ լրա-
գիրը կտակով անցաւ տիկին Մարիամ Մելիք-Աղամալեանցի
ձեռքը, որի հրատարակութեամբ «Մշակ»-ի մի-երկու համար-
ները լոյս տեսան անցեալ 1892 թականի դեկտեմբերի վեր-
ջերին, ժամանակաւոր խմբագրութեամբ պ. Յովհաննէս Տէր-
Մարկոսեանցի. Բալց ներկալ 1893 թականի սկզբից «Մշակ»

լրագիրը ալ ևս չհրատարակեց՝ հաստատւած խմբագիր չունե-
նենալու պատճառով: Ալփ, որպէս հաղորդում են, «Մշակ»-ի
խմբագիր հաստատւած է պ. Ալեքսանդր Քալանթար:

Պ. Ալ. Քալանթարը իւր բարձրագոյն ուսումը ստացել է
Ռուսաստանի Պետրովսկի կոչւած զիւղատնտեսական ճեմարա-
նոս և իւր մասնագիտութեան մէջ աւելի չալտնի է իբր կաթ-
նաշտեան, որի պաշտօնով նա երկար ժամանակ ծառայել է
Ռուսաստանում Կաթնատնտեսական Վերնապիւնի մօտ: Նա
առիթ է ունեցել իւր մասնագիտութեան վերաբերեալ լանձ-
նարարութիւնով շրջել նաև Եւրոպայի մի քանի երկիրները:
Փոխադրուելով Անդրկովկաս, պ. Քալանթարը մինչ օրս ծառա-
լում էր ամառնալիւն արօտատեղերին վերաբերեալ պետական
պաշտօնով: Ունի բաղմաթիւ թէ փոքր և թէ խոշոր գրած ք-
ներ կաթնատնտեսութեան և անասնապահութեան մասին,
որոնց մէջ նաև «Անասնապահութիւնը Անդրկովկասում» գնա-
հատելի աշխատութիւնը ուսուրէն լեղում (տես դորա մասին
պ. Թ. Սաղաթեւեանի չօղածը «Մուրճ» 1891 №

Իւր մասնագիտութիւնից դուրս, սակայն, պ. Քալանթա-
րը, բնական հակումով, ներկած է եղել հալ զբաղանութեանը
և մասնաւորապէս հալ մամուլին: Գլխաւորապէս ուսանողական
տարիներում թղթակցել է «Մշակ» լրագրին, իսկ ապա, եր-
կար տարիներից լետով՝ «Մուրճ» ամսագրին, սորա հիմուն-
լու ժամանակից մինչ շուրջ երեք տարի, մասնակցելով
ամսագրի քննադատական-գրախօսական բաժնին և փորձե-
լով իւր ոլթերը բեւեռարկատիկայի մէջ Ա. Նամակեան ծածկ-
անունով: «Մուրճ»-ում տպւածները լրացնելով ալ պատկերնե-
րով, նա հրատարակեց պատկերներ ի երկու հատոր—«Պատրիկ-
եանի նամակները» և «Կեանքի գծեր» խորագիրներով, որոն-
ցից առաջինի մասին մի գնահատութիւն տրեց «Մուրճ»-ում
նոյն ալս տարի (1893 № 6, չօղած Պետր. Մակրումանցի):

Հասարակական ասպարիդում ևս պ. Քալանթարը ան-
լալտ չէ. արդէն երեք տարի է, որ Թիֆլիսի Հրատարակչա-
կան Ընկերութեան նոր կազմի մէջ նա վարում է վարչութեան
նախագահի պաշտօնը:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ: «Մուրճ»-ի անցեալ № 7—8 համարից մեր ընթերցող-
ները զիտեն արդէն, որ Թիֆլիսի հաւոց թատրոն վարելը մի
քանի զրամատէրեր իրանց վրա ևն վերցրել: Ալփ կարող ենք
հաղորդել, որ ալգ անտրպրենեօրներն են՝ պ. պ. Գովհանէս
Թումանեանց, և Ստեփան Սուլիանեանց Նիկողայոս Տէր-Նիկողո-

սեան, Խմբի մէջ են տիկիններ՝ Հրաչեայ, Ալմա, Ախաչեան, Վարդուհի, Մելիքեան և Պենեմէնեան. պ. պ. Պետրոսեան, Արեւեան, Դաւթեան, Աբրահամեանց, Պրենմեան, Արաքսեան և ուրիշներ:

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ վէպը, որ տպւեց «Մուրճ»-ի առաջին կիսամեակում, յեւթ է կազմում «Հալոնիք» լրագրի (առ 25 օդոստ.) մի առաջնորդողին, որ ստորագրւած է պ. Արիւար Արիւարեանցի սկզբնառեւերով: Այդ լուսածից առաջ ենք բերում հետեւեալ կտորը.

«Արսէն Դիմաքսեանը ձգտում ունեցող գիրք մըն է, որ պիտի կրնայ ազդեցիկ ըլլալ հանրային բարձրութեան վրայ, իր իմաստասիրութիւնն է թէ՛ զարդացած անձնաւորութիւնները պարտաւոր են աշխատիլ իրենց միջավայրին զարդացմանն ու չառաջդիմութեանը, Հանրային մտաւորական օգտին սրտանց աշխատողները շատ թերեւ կը գտնեն կեանքի բուռ, հաճութիւն կրեն զաշխարհը գերազանց պարտականութեան կատարումին մէջ կը կապանալ:

«Վէպ» հերոսը, Արսէն Դիմաքսեան, ու շուրջը բոլորողները՝ Սալամբէղեան, Մսերեան, Հարիգեան, տիպարներ են որք կը փակչի... սրտիդ, որոնց կեանքը խորհելու կը հարկադրէ զքեզ և աշխիդ առջև կը պարզէ ընկերական պարտականութեանց հորիզոն մը ուր հաճութիւն կը խորասուզիս: Այդ դէմքերը կը տխրեցնեն ոգիդ, բայց ճշող, տառապեցնող տխրութեան ներքև չէ որ կ'ընկճուի, այլ աշխարհը թախծութիւնն է որ ուժ կուտայ ոգիին, կ'ամրապնդէ զաշխարհը: Ու յետոյ կը միտի թարւիս անոնց կեանքի բարեբաւաստութեամբը, բարեբաւաստութիւն որ չէ հիւսւած ոսկիի թերթով և ոչ ալ սիրով մետաքսով, աշխատութիւն և հանրային պարտականութիւն կատարում, ահա ինչ որ կըցած է այդ մեծ սրտերուն հանգիստ և բերկրանք պատճառել:

«Զգւանք ալ հզօր միջոց մըն է ժողովուրդ մը բոլոր մարկութեամբը նկարագրւած Բարաթեանները, Ինխաթեանները, Վէքիեանները աշխարհի դէմքեր են որ մէկ անգամէն կարելի է զգուշ աշխարհը «խելացի», «կեղեցու պաշտպան ծանրախոհ» կեղծաւորներէն որ ժողովուրդ մը մեղկացնելու, ապականելու միջնորդներ են:

«Պէտք է չուսալ թէ այդ գիրքը կ'ովկասի նոր հաշիւ սերնդին վրայ սարսեցուցիչ տպաւորութիւն մը ընէ և կեղծաւորութեան պաշտօնական ներկայացուցիչներու ազդեցութենէն ազատէ նորերը, շնորհիւ զգւանքին»:

Պր. Արփիարեանի լուսածից քաղենք նաև հետևեալ կտորը՝

«Կարդացածս վէպ մը չէր, ինծի աշնպէս կը թւէր գէթ, ալլ մաս մը Թիֆլիսի ժամանակակից պատմութեան, կենսագրութիւն մը ապրող անձերու։ Ուրեմն ալդ գիրքը պէտք է քննեն, ըսի, ուրիշներ, չեղք քննադատներ, որոնց մտքի չափութիւնը չպղտորեն ծածկանուծներու իսկական դէմքերը, ուստի և կարող ըլլան կատարեալ պաղարկուածութեամբ ուսումնասիրել «Արեւն Դիմաքսեանը» իբր հոգեբանական ու գեղարվեստական գործ միաջն»։

Այս կարծիքը մեր սկիական մի քանի փոփոխութիւններով սակալն, Դա ոչ թէ Թիֆլիսի ժամանակակից պատմութեան մի մաս է, ալլ առհասարակ Կովկասեան հայերի ժամանակակից հոսանքների պատմութեան մի մաս։ Կռիւր գաղափարական ուղղութեան ընդդէմ կեղծաւորութեան, իւր սոյն ընդդէմ գծերով, ինչ նա, ալդ կռիւր, արտապատեւ է ալս վերջին երեսուն տարիներում,—ահա մեր կարծիքով, վէպի նիւթը։ Բաց ռիալ է իբր ալդ վէպը կենսագրութիւն է ապրող անձերի։ Դա կենսագրութիւն չէ, բաց միաջն վէպի գործող անձերի մէջ կան շատ գծեր, որ վերցրած են կեանքում գործած անձերից։

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ անուշադրութիւնը դէպի իւր հրատարակած գրքերը երբեմն ծաղաղեղութեան է հասնում։ Նորա հրատարակած վերջին գրքովի գոնէ շատ երեսները (Մե 75, պ. Բալաղեանի գրածքը) ըստ երևութիւն, սրբագրութեան երես չեն տեսել։

† ՄԻՐԻԲԵԼ, Ֆրանսիական զօրքի զլխաւոր շտաբի պետը վախճանւեց։ Հանդուցեալը նշանաւոր էր ոչ միայն իւր բարձր պաշտօնով, ալլ իւր զինւորական մեծ համբաւով առհասարակ։ Նա մէկն էր ալն երեք զեներալներից, որոնց վրալ ամենամեծ լուսերն էին դնում հայրենասէրների կողմից։ Սոսիէ, Միրիբէլ և Գալիֆէ— ահա Ֆրանսիական զօրքի զլխաւոր աստղերը։ Մարի-Ֆրանսուա-Փոդէֆ դը Միրիբէլ ծնւած էր 1831 թ., 1854-ին ստացաւ սպահութեան առաջին աստիճանը, մասնակցեց իտալական, չինական և մեքսիկեան արշաւանքներում, Պարիզի պաշարման ժամանակ 1870—71-ին բրիգադի հրամաւոր էր, 1875-ին բարձրացաւ զեներալի աստիճանին, Գամբետտայի մինիստրնախաղահութեան ժամանակ նշանակւեց զլխաւոր շտաբի պետ, իսկ Գամբետտայի մինիստրութեան անկումից չետոյ նորից վե-

բաղարձաւ գէպի զօրքը, մինչև որ Ֆրէյսինէի մինիստրութեան ժամանակ 1890 թ. նա նորից նշանակւեց պետ գլխաւոր շտաբի Միլիթէլը համարում էր ֆրանսիական զօրքի ոգին:

† ՄԱԿ-ՄԱՀՈՆ, ֆրանսիակի մարշալ, վախճանւեց, Հանգուցեալը քաջ զինւորական էր և անաջող քաղաքական անձն, թիկնրի անկողից լետով՝ նա ընտրւեց նախագահ ֆրանսիական հանրապետութեան 1873 թ. և հրամարեց իւր պաշտօնից 1879 ին տեղ տալով Ժիւլ Գրեւիին:

ԴԱԻԱՌԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՒՄ տպւած պ. Թ. Մուրադեանցի գեղեցիկ չօղւածի վրալ գարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐԵՆՐ

- 1) ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.—«Արսէն Դիմաքսեան», վէպ, արտատպւած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպար. Ռոսինեանցի, 1893 թ., գինն է 1 ռուբլի 50 կոպէկ:
- 2) ԲԱԼԱՂԵԱՆ, Սամուէլ.—«Զրուցներ հողի մասին», Հրատ. Թիֆլ. Հր. ընկերութեան, Թիֆլիս, տպար. Վրաց Հրատ. Ընկ., 1893 թ., գինն է 15 կոպէկ:
- 3) ՖԼԱՄՄԱՐԻՈՆ, Կամիլլ,—Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն, 100 նկարով: Յարմարեցրեց դասատուութեան համար Շ. Դեկոն, թարգմանեց ֆրանսերէն չորրորդ տպագրութիւնից Տ. Յովհաննիսեան: Հրատարակեց Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկ.—Թիֆլիս, տպ. Մ. Ռոսինեանցի, 1893 թ. գինն է 1 ռուբլի:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ
